Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
10-րդ դասարան Տևողությունը՝ 180 րոպե

Գինար-ուկներով լեցուն հովտի լուսաբացն ավետող երգասա- դեղ-անիկների անդո-ություն պարգևող ճռ-ղյունը ներդաշնակվում էր պա-պաջուն աղբյուրների խոխոջ-նին ստեղծելով անքա-տելի բնության ան-ստգյուտ հոգեհմա մեղեդին: Այստեղ լեռների գո-ում զվարթախոս գետի ափին ուր դաշտերն էին ալ-ետում մեղմ շն-շն-ոցով իսկ վարսաթափ ուռիները նազում պ-բանքով բարեբեր որ-ատունկերի կողքին փայտաշեն ու գո-տրիկ տնակում ծնողների հետ ապրում էր մի տղա: Ի հեճուկս ծնողների որոնք սիրում էին ոչ շքեղ սակայն ջերմ ու տաքուկ իրենց տունը տղան անդադար դժգոհում էր նա երազում էր ունենալ աշխարհի ամենալավ տունը:

Տա-ագրի մա-աղն առած մի օր երիտասարդը հեռացավ տնից հոգում անթեղա- ամենալավ տունը գտնելու տարիների իր փափագը:

Թափառելով աշխարհեաշխարհ անցավ օվկիանոսներ ու ծովեր լայներա- խորխորա-ներ ու երկնաքեր- լեռներ: Եղավ մարմարակերտ ապարանքներում տեսավ վիմակո-դոյակներ ու որ-աքարե տներ բայց և այնպես չգտավ իր երազած տունը ամեն տեղ ինչ-որ բան էր պակասում:

Մի օր էլ տղան երազ տեսավ ականակի- խավարի մեջ խա-կանքի պես ուրվագծվում էր մի համեստ տնակ պատուհանից առկայծող ճրա-ով: Թ-թ-ացող սրտի տրոփյունից արթնանալով նա ան-կալի հայա-քը ս-եռած դեպի հեռուները շշնջաց Ես վերջապես հասկացա որն է ամենալավ տունը:

1. Էրացրո՛ւ տեքստում բաց թողնված տառերը: (3 միավոր)
2. Կետադրի՛ր համր բնագիրը: (3 միավոր)
3. Տեքստից դուրս գրի՛ր տրված բառերի հոմանիշները՝ *կարոտակեզ, թաքցնել, աննման, վիհ, բաբախ, սոսափյուն, գեղգեղանք, հարմարավետ, վտարանդի, ուղեպարկ, տեսիլք, սեթևեթանք, անխզելի, փայլփլուն:* (3 միավոր)
4. Տրված **-ոն** ածանցով և բառերից ընտրված համապատասխան արմատներով կազմի՛ր տասը բառ՝ առանց երկրորդ ածանցի. *անգործունյա, բեկոր, զգացմունք, բազմաքանակ, ջարդուխուրդ, դրվագ, ոսկեծամ, օրաթերթ, միլիարդավոր, լիահույս, աղեկտուր, մակար, շատակեր, սիգախոտ, թափանցիկ, մեղմաբար, ծամածռված, սալարկ, գաղտագողի, գազազել, մորթապաշտ զուգապար:* (1 միավոր)
5. Կազմի՛ր մեկական բառ **ստոր, ամեն, հար, վեր, ներ** ածանցներով և դրանց համանուն արմատներով: (1 միավոր)
6. Գրի՛ր **վերահաս, գիրգ, ծաղկել, մեղկ, սպրդել** բառերի հարանունները՝ յուրաքանչյուրի կողքին նշելով բառիմաստները: (2 միավոր)
7. Փակագծերը հանելով՝ գրի՛ր անջատ, միասին կամ գծիկով. կույր(աղի), թև(թևի), քարե(դարյան), հոգեբան(մանկավարժ), դեմ(դիմաց), հյուսիս(ատլանտյան), շիփ(շիտակ), նոր(զելանդական), դուռ(դռան), գիր(գրականություն), ձեռք(բերել), հնուց(ի)վեր, ի(դեպ), հորոտ(մորոտ), անուն(ազգանուն), մերձ(քաղաքային), ձեռքով(ոտքով), հաստ(աղիք), տան(տիկին), հայր(սուրբ): (1 միավոր)
8. Գրի՛ր բառաբերականական և քերականական համանունների երկուական զույգ՝ յուրաքանչյուրի կողքին նշելով իմաստային և քերականական արժեքը: (1 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն՝ «Միայնակ ծառի մտորումները» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)